# ԿԱՐԾԻՔ

## ՀՐԱԾԻՆ ՎԱՐԴԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ «ՍՓՅՈՒՌՔԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ-ՏԵՍԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍՈՒՄ (20-ՐԴ Դ. ՎԵՐՋ-21-ՐԴ Դ. ՍԿԻԶԲ)» **թեկնածուական ատենախոսության մասին**

Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված այս ատենախոսությունը նկատելիորեն տարբերվում է մինչ օրս նման մասնագիտական դասիչով պաշտպանված աշխատանքներից, քանի որ նրա թեման գտնվում է միջգիտակարգային դաշտում: Ինչպես ցանկացած նորույթ, նման իրողությունն ունի և՛ տվյալ փաստից բխող իր առավելությունները, և՛ անշուշտ, թերությունները: **Սփյուռքագիտությունը** (diaspora studies), գիտական ուսումնասիրության համեմատաբար նոր ոլորտ լինելով հանդերձ, ամենևին էլ նորություն չէ իր հիմքը կազմող սփյուռքների անցած պատմական ուղու վերաբերյալ ուսումնասիրությունների տիրույթում: Ուստի ողջունելի է պատմությունն ու տեսությունը մեկ ընդհանուր աշխատանքի մեջ համադրելու ցանկությունը:

Ատենախոսության համակողմանի ներկայացման ու գիտական գնահատականի համար հիմք ենք ընդունում այն փաստը, որ աշխատանքի երեք գլուխներում ու տասը ենթագլուխներում քննության ենթարկված հիմնահարցերը դասավորված են ընդհանուրից դեպի մասնավորը տանող դեդուկտիվ մեթոդով: Ուստի՝

**Առաջին գլխի** բավականին երկար վերնագրից կարելի է առանձնացնել **տեսաբանումը** եզրույթը՝ որպես հարցի տեսական մասն ըմբռնելու փորձ:

**Երկրորդ գլխի** վերնագրից կարելի է առանձնացնել **տիպաբանումը** հասկացությունը, որով փորձ է արվում ավելի կոնկրետացնել քննվող հիմնահարցերը և գտնել առանձին տեսաբանների առաջարկած դասակարգումների տարբերություններն ու ընդհանրությունները:

Իսկ **երրորդ գլխի** նույնպես բավականին երկար վերնագրից կարելի է առանձնացնել ուսումնասիրության բուն առարկայի՝ Սփյուռքի քաղաքական գործոնի հավակնելու, այսինքն՝ **քաղաքականացման** փորձերի տեսական հիմքի լուսաբանումը ինչը որոշակի գիտագործնական խնդիրներ առաջադրելու հնարավորություն է ստեղծում հեղինակի համար:

Աշխատանքը շարադրված է գրագետ ու բարեխիղճ կերպով, հեղինակը տիրապետում է նյութին, ուստի կարողանում է այն մատուցել քննական-վերլուծական մոտեցմամբ: Ատենախոսության մեջ ներառված հարցերի ծանրության կենտրոնը հիմնականում սՓյուռքագիտության տեսական պրոբլեմատիկան է, իսկ նրանում քննված հեղինակների շրջանակը խիստ էլիտար բնույթ ունի: Այս իրողությունն իր առավելություններն ունի, որոնք սակայն ոչ միշտ է արդարացված: Դրա հիմնական պատճառը ատենախոսության վերնագրի ՍՓՅՈՒՌՔԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ-ՏԵՍԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍՈՒՄ զույգ բաղադրիչներից առաջինի՝ պատմագիտականի համար անհրաժեշտ ու պարտադիր պահանջները ոչ միշտ պահպանելու հետևանքն է: Որովհետև ատենախոսությունում քննված սփյուռքագետ-հեղինակների շրջանակը նման նեղ խնդիր չի ունեցել՝ դա ներկա ատենախոսության հեղինակի գործն է:

Քանի որ ատենախոսությունը նախատեսված է պատմական գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման համար և որպես նրա

վերնագիր ընտրվել է ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ-ՏԵՍԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍ դիխատոմիան, ապա մեր կարծիքով՝ աշխատանքի առաջին գլուխը ու մանավանդ՝ դրա մուտքը թերևս հարկ էր ծառայեցնել ոչ թե **սփյուռքագիտություն** ծագման ու անցած ուղու համառոտ ներկայացմանը (էջ 16-19), այլ սփյուռքների՝ պատմականորեն առաջ եկած տիպերի քննությանը՝ ժամանակագրական հաջորդականությամբ: Իսկ սփյուռքագիտության ծագման հետ կապված խնդիրները պետք է քննվեին առաջաբանում՝ որպես թեմայի ուսումնասիրվածության աստիճանը բացահայտելու փորձեր: Այսինքն՝ նախ պետք էր տալ պատմական ակնարկ՝ հին աշխարհ՝ հրեական, հունական, փյունիկյան և այլն

Միջին դարեր՝ հայկական գաղթօջախ՝ որպես նույն երևույթի տիպական դրսևորում:

Եվ Նոր ժամանակներ՝ որպես ավելի բազմազան ու խառը բնորդների առաջ գալու իրողության արտահայտություն և այլն:

Ու դրանից հետո միայն կարելի էր անցնել **զոհ** կամ **աշխատանքային** բնորոշումներին և կոնկրետ սփյուռքների՝ **հայկական**, **հրեական** կամ՝ **թուրքական** էթնիկ անվանումներին: Սփյուռքների տիպաբանությունը հիմնականում սինքրոնիկ (համաժամանակյա) հարթության վրա քննելու փորձը բարդ տեսական կոնստրուկցիաները կտրում է իրենց ձեւավորման կոնկրետ հարթությունից՝ պատմական ժամանակից: Որովհետև այդ նույն՝ **հայկականը** կամ՝ **հրեականը** դարերի ընթացքում նույնպես փոխվել են: Անշուշտ վերջին շրջանի սփյուռքագետ - տեսաբանները ևս մեծամասամբ անտեսում են այս «մանրուքը»: Սակայն սփյուռքագիտությանը պատմագիտական ակնոցներով նայելու հրամայականը ինքնին պահանջում է

համաժամանակյա ու տարժամանակյա մոտեցումների զուգորդում: Հակառակ պարագայում կարող են անտեսվել օրինակ՝ միջնադարի հայկական գաղթաշխարհի և ժամանակակից հայկական Սփյուռքի որակական տարբերությունները: Նույնը վերաբերում է նաեւ այլ ժողովուրդների մասնավորապես հրեաների ու հույների՝ պատմական մեծ անցյալ ունեցող սփյուռքների քննությանը, որոնք սկզբունքորեն տարբերվում են ինչպես իրենց անտիկ բնորդներից, այնպես էլ այսօր՝ գլոբալիզացիայի դարաշրջանում ձևավորվող նոր իրողություններից:

Գիտակցելով այդ հեռանկարը դեռևս անցած դարի 1990-ական թվականներին մենք առաջարկեցինք համահայկական մասնագիտական ցանցերի ստեղծման ծրագիրը, որը մասամբ միայն իրականացվեց: Նույնը վերաբերում էր գլոբալացող աշխարհում հայագիտության դերի անխուսափելի փոփոխությանը նախապատրաստվելու խնդրին, որի լուծումը նույնպես մնաց թղթի վրա: Ուստի մինչ զբաղվում ենք արտասահմանյան սփյուռքագետների տեսակ՛ան բարդ կոնստրուկցիաների վերարտադրությամբ, անընդհատ հապաղում ենք մեր սփյուռքյան կեցության առավելություններն օգտագործելու հարցում:

Մեր նման դիտողությունն ամենևին էլ չի սքողում ներկա ատենախոսության ակնհայտ առավելությունները: Ուղղակի խնդիրն այստեղ տեսության մեջ չէ, այլ երևույթը որպես գործընթաց-կառույց դիտարկելու անհրաժեշտության: Սփյուռքը հենց որոշակի գործընթացից ծնված կառույց է, որն այսօր մեկ այլ գործընթացի գլոբալիզացիայի ազդեցությամբ վերածվել է գլոբալ մրցահարթակի: Ուստի ունենալ նման ոլորտի մասնագետ՝ նշանակում է պատրաստ լինել նրանում մեզ սպասվող մարտահրավերներին: Հրաչին Վարդանյանը հենց այդպիսի մասնագետ է, ով խորությամբ տիրապետում է նյութին, ինչում մենք

համոզվել ենք նրա հոդվածը խմբագրելու ու տպագրելու ընթացքում: Ուստի մեր այս դիտողություն հիշեցնող առարկությունն իրականում ավելի շատ վերաբերում է ոչ թե ներկա ատենախոսությանը, այլ տեսության ու պրակտիկայի հարաբերակցության հարցում ներկայումս երկրորդի ձեռք բերած գերակշռող դիրքերն օգտագործելու հրամայականին: Սփյուռքը որպես գործընթաց-կառույց, որպես կենդանի օրգանիզմ, այսօր այնքան արագորեն է փոխվում, որ տեսաբանման կարիք այնքան էլ չունի: Այդ պատճառով մենք կարևորում ենք ներկա ատենախոսության երրորդ գլխում առկա՝ Սփյուռքը որպես քաղաքական գործոն դիտարկելու փորձերը, որոնք կոնկրետ-գործնական քայլերի վերածելու կարիքը մենք այսօր ունենք:

Այս տեսանկյունից ևս ներկա ատենախոսությունը մի կողմից արժանի է դրվատանքի, իսկ մյուս կողմից զգում է իր դրույթների կիրառական նշանակության հստակեցման կարիքը:

Աշխատանքում առկա են նաև այլ՝ ոչ էական թերություններ ու անճշտություններ:

Էջ 15 «Աշխատանքի կառուցվածքը և ծավալը պայմանավորված են հետազոտության նպատակներով և խնդիրներով և համապատասխանում են ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից սահմանված չափանիշներին»:

Ատենախոսության հեղինակը չպետք է որոշի դրանց համապատասխանությունը ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից սահմանված չափանիշներին, այլ մենք՝ ընդդիմախոսներս:

Եվ վերջապես՝ եթե խոսք է գնում Սփյուռքը որպես ինքնուրույն գործոն դիտարկող սփյուռքակենտրոն հայեցակարգի մասին, հեղինակը պարտավոր էր գոնե մի քանի նախադասությամբ հիշատակել հայ

իրականության մեջ նման մոտեցման ամենակարկառուն ներկայացուցչի՝ բանաստեղծ ու գրող **Վահե Օշականի** անունը, ով իր ողջ գինտակից կյանքում քարոզել է այդ գաղափարը:

**Ավարտելով՝** առանց վերապահության հաստատում ենք ներկա ատենախոսության համապատասխանությունը ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից սահմանված չափանիշներին: Ուստիև միջնորդում ենք ԵՊՀ-ին կից գործող 069 «Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդի առաջ՝ Հրաձին Վարդանի Վարդանյանին պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան շնորհելու հարցով:

Պաշտոնական ընդդիմախոս՝ պատմական գիտությունների դոկտոր Գեւորգ Խուդինյան

01.12.2023

Գեւորգ Խուդինյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ՀՀԱՀ պատմության ինստիտուտի
տնօրեն, պ.գ.թ., դոցենտ Հ.Ն.Սարգսյան